

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերում փոփոխություններ կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2018 թվականի հունիսի 14-ի N 2 որոշմամբ որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **ՀՀԱՄԱԲԳ-ԳՀԱՊՁԲ-ԲԵՆՁԻՆ-18/4**

ՀՀ Աշտարակի քաղաքային համայնքի «Բարեկարգում» ՀՈԱԿ-ի կարիքների համար Վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄԱԲԳ-ԳՀԱՊՁԲ-ԲԵՆՁԻՆ-18/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

Փոփոխության առաջացման պատճառ N 1 ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից 14.06.2018թ-ին էլ. Փոստին ստացված բացասական եզրակացություն

Փոփոխության նկարագրություն Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերության՝ կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում, այնինչ վերոնշյալ ծածկագրով ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծին կից տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի մեջ ապրանքի մատակարարման 1-ին փուլի ժամկետ է նշվել 10.07.2018թ.

Փոփոխության հիմնավորում Հրավերի համապատասխանեցում ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերության պահանջներին:

Փոփոխության առաջացման պատճառ N 2 ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից 14.06.2018թ-ին էլ. Փոստին ստացված բացասական եզրակացություն

Փոփոխության նկարագրություն Հրավերում ներառված պայմանագրի նախագծին կից տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի ծանոթության մեջ սահմանվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետին հակասող պահանջ, այն է՝ մատակարարը Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում և մարզկենտրոններում պետք է ունենա առնվազն 1 բենզալցակայան, այնինչ տվյալ դեպքում կարևորը մատակարարի կողմից տրամադրված կտրոնների պատշաճ սպասարկումն է, ոչ թե սեփական բենզալցակայանի առկայությունը

Փոփոխության հիմնավորում Հրավերի համապատասխանեցում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջներին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀԱՄԱԲԳ-ԳՀԱՊՁԲ-ԲԵՆՁԻՆ-18/4 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Կ. Ռուստամյանին:

Հեռախոս՝ 093759672

Էլեկտրոնային փոստ՝ ekgnumner@mail.ru

ՀՀԱՄԱԲԳ-ԳՀԱՊՁԲ-ԲԵՆՁԻՆ-18/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը